ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2020/1Փ

ք. Երևան «09» «12» 2020թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

2.4.5 Կատարողը՝ (նախագծման ծառայություն մատուցող ընկերությունը) նախնական փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից կրկնակի փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության ծագման դեպքում, վճարում է կրկնակի փորձաքննության իրականացնելու համար անհրաժեշտ գումարը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 35,144,000 (երեսունհինգ միլիոն հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ

ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.16 Եթե փորձաքննության ընթացքում հայտնաբերված բացթողումների ու սխալների ուղղումը չի ենթադրում հիմնական նախագծային լուծումների փոփոխում, ապա նախագիծը ճշտվում և լրացվում է աշխատանքային կարգով, որից հետո տրվում է վերջնական փորձագիտական եզրակացություն: Այդ դեպքում նախագիծը կրկնակի փորձաքննության չի ներկայացվում:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02815457 ՀՀ 90001105718 գլխավոր քարտուղար Հ. Բատիկյան (ստորագրություն) Կ.Տ.	«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան Գայի փ. շենք 14, բն. 45 «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ՀՀ 11500580197801 ՀՎՀՀ 09802201 տնօրեն Հ. Անդրեասյան (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«09» «12» 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2020/1Փ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	50531140/502	Ստորև	դրամ	11,213,000	1	ՀՀ, ք. Երևան կառավարական Տուն 3	Պայմանագրի հիման վրա կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 30/ երեսուն/ աշխատանքային օր, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25-ը
2	50531140/503	Ստորև	դրամ	11,827,000	1		
3	50531140/504	Ստորև	դրամ	12,104,000	1		

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

Ծրագրի անվանումը Ճանապարհների հիմնանորոգում

Ֆինանսավորման աղբյուր 2020 թ. ՀՀ պետական բյուջե

Պատվիրատու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Աշխատանքի անվանումը չափաբաժին 1-ով նախատեսված ճանապարհների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության -իրականացման աշխատանքներ

Ճանապարհների անվանումները և հատվածները

հ/հ	չափաբաժին **1-ով նախատեսված ճանապարհներ**
1	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ150+700 - կմ167+600 հատվածի հիմնանորոգում
2	Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ2+000 - կմ10+500 հատվածի հիմնանորոգում
3	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ67+500 փլուզված հատվածի վերականգնում (գաբիոնային շարվածք) (Սևանի տարածաշրջան)
4	Մ10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 122+000 - կմ124+000 հատվածում հողային պաստառի փլուզված հատվածների, պաշտպանիչ հենապատերի և կառուցվածքների վերակագնում
5	Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+000 հատվածի հիմնանորոգում
6	Հ-11, Մոտեցում Խոր Վիրապին հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ1+700 հատվածի հիմնանորոգում
7	Հ-12, Մասիսի տրանսպորտային հանգույց - Մասիս - Ռանչպար - Արաքս - Ջրառատ - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ9+500 հատվածի հիմնանորոգում
8	Հ-13, /Մ-3/ (Վաղարշապատ) - Մասիս - /Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ10+300 - կմ15+300 հատվածի հիմնանորոգում

9	Հ-30,Մոտեցում Գոշավանքին հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+900 հատվածի հիմնանորոգում
10	Հ-30, /Մ-4/ - Ճամբարակ - /Մ-14/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ11+000 հատվածի հիմնանորոգում
11	Հ-30, Մ4-Ճամբարակ-Դրախտիկ-Մ14 հանրապետական նշանակության ավտոճանապարհի հարկադիր քարաթափման աշխատանքներ (Ձորավանք-Մարտունի համայնքների տարածք)
12	Հ-45, /Մ-2/-Շաքի-Սիսան-Դաստակերտ-Ցողունի հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ14+590-կմ25+900 հատվածի հիմնանորոգում
13	Հ-63, /Մ-16/ - Կոթի - Բարեկամավան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ8+500 հատվածում փլուզված հողային պաստառի շեպի և կողնակի վերականգնում
14	S-9-19, /Մ-2/ - Հերհեր -Կարմրաշեն ավտոճանապարհի կմ10+000 - կմ18+700 հատվածի հիմնանորոգում
15	S-2-31, /S-2-30/ - Բերդիկ - /Հ-9/ (Այգեստան) ավտոճանապարհի կմ0+000 - կմ2+100 հատվածի հիմնանորոգում
16	Մարտունի քաղաքի Սայաթ Նովա փողոցի (Մ-10-ի շրջանց) ավտոճանապարհի հիմնանորոգում

Աշխատանքի տեսակը	Պարզ փորձաքննություն
Ընդհանուր դրույթներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկական առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան:
Հիմնական պարտականություններ	Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:
Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, • ՀՀ գնումների մասին օրենքի, • ՀՀՇՆ IV-11.05.02-99 շինարարական նորմերի, • ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 711-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի, • ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, • ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատված ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգերի, • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի:

Աշխատանքի կատարման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության իրականացման աշխատանքների ավարտը՝ մինչև 30 (երեսուն) աշխատանքային օրից, հաշված Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին փորձաքննության իրականացման նպատակով տրամադրելու օրվանից

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ծրագրի անվանումը	Ճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2020 թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Աշխատանքի անվանումը

չափաբաժին 2-ով նախատեսված ճանապարհների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության -իրականացման աշխատանքներ

Ճանապարհների անվանումները և հատվածները

հ/հ	չափաբաժին **2-ով նախատեսված ճանապարհներ**
1	Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման կմ152+600 - կմ156+700 հատվածի հիմնանորոգում
2	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ108+400 - կմ126+100 հատվածի հիմնանորոգում
3	Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ130+400 - կմ135+200 հատվածի հիմնանորոգում
4	Մ-7, Մ-3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ48+000 - կմ52+000 հատվածի հիմնանորոգում
5	Հ-21, /Հ-75/ - Հոռոմ-Արթիկ-Ալագյազ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ19+000 - կմ23+900 հատվածի հիմնանորոգում
6	Հ-32, /Մ-1/ (Գյումրի) - Կապս - Ամասիա - /Մ-1/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ20+900 - կմ22+700 և կմ23+000 - կմ31+200 հատվածների հիմնանորոգում
7	Հ-70, Մ-6 - Մարց - Աթան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ27+500 հատվածի հիմնանորոգում
8	Հ-75, Մ-9-Իսահակյան-Գյումրի-Մ-7 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ68+300 - կմ70+800 հատվածի հիմնանորոգում
9	Հ-83, /Հ-21/ (Արթիկ)–Պեմզաշեն- /Մ-1/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+900 հատվածի հիմնանորոգում
10	Հ-93, /Հ-75/ - Երերույքի տաճար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ2+700 հատվածի հիմնանորոգում
11	Տ-7-42, /Մ-7/ (Գյումրի) – Հացիկ – Կարմրաքար (Տ-7-45) ավտոճանապարհի կմ0+000-կմ 4+000 հատվածի հիմնանորոգում
12	Տ-5-69, /Հ-70/ - Ահնիձոր ավտոճանապարհի կմ0+000 - կմ4+000 հատվածի հիմնանորոգում
13	/Հ-70/ – Քարինջ ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+500 հատվածի հիմնանորոգում
14	Տ-5-82, /Հ-70/ – Լորուտ ավտոճանապարհի կմ0+000 - կմ1+600 հատվածի հիմնանորոգում
15	Տ-5-93, /Հ-70/ - Մարց ավտոճանապարհի կմ0+000 - կմ0+800 հատվածի հիմնանորոգում
16	Տ-7-48, Գյումրի (Տ-7-58) - Արևիկ – Այգեբաց - Վարդաքար - /Հ-21/ ավտոճանապարհի կմ10+900 - կմ16+200 հատվածի հիմնանորոգում

Աշխատանքի տեսակը

Պարզ փորձաքննություն

Ընդհանուր դրույթներ

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկական առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան:

Հիմնական պարտականություններ

Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում:
Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:

Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ

Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայն՝

- ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի,
- ՀՀ գնումների մասին օրենքի,
- ՀՀՇՆ IV-11.05.02-99 շինարարական նորմերի,
- ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 711-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի,
- ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի,
- ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատված ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման,

	ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգերի, • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	**ավարտը**
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության իրականացման աշխատանքների ավարտը՝ մինչև 30 (երեսուն) աշխատանքային օրից, հաշված Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին փորձաքննության իրականացման նպատակով տրամադրելու օրվանից

ՉԱՓԱԲԱԺԻՆ 3

Ծրագրի անվանումը	Ճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2020թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Աշխատանքի անվանումը	չափաբաժին 3-ով նախատեսված ճանապարհների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության -իրականացման աշխատանքներ
Ճանապարհների անվանումները և հատվածները	

հ/հ	**չափաբաժին 3-ով նախատեսված ճանապարհներ**
1	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ53+150 - կմ65+350 հատվածի հիմնանորոգում
2	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ98+000 - կմ101+400 հատվածի հիմնանորոգում
3	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի կմ196+000- կմ202+200 հատվածի հիմնանորոգում
4	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի կմ374+000 - կմ384+300 հատվածի հիմնանորոգում
5	Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ25+200 - կմ36+000 հատվածի հիմնանորոգում
6	Հ-41, /Մ-2/ - Նորավանքի պատմական հուշարձան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ8+100 հատվածի հիմնանորոգում
7	Հ-49, /Մ-17/-Նոնաձոր-ԱՀ սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ8+600 հատվածի հիմնանորոգում
8	Հ-55, Հրազդանի տրանսպորտային հանգույց-Ծաղկաձորի մարզահամալիր հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+500 հատվածի հիմնանորոգում
9	S-8-86, Հ-49-Նոնաձոր կմ0+000 - կմ2+200 հատվածի հիմնանորոգում
10	S-1-24 /Մ-3/ Մելիքգյուղ ավտոճանապարհի կմ0+000-կմ6+000 հատվածի հիմնանորոգում
11	Իջևան քաղաքի Սարիբեկ-Օհանյան փողոցի կմ0+000-կմ1+145 հատվածի հիմնանորոգում
12	Հրազդան քաղաքի Տիգրան Մեծ փողոցի 290 գծ.մ հատվածի հիմնանորոգում
13	Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի միջթաղամասային փողոցների 3384 գծ.մ (626 գծ.մ, 310 գծ.մ, 176 գծ.մ, 1235 գծ.մ, 950 գծ.մ և 87 գծ.մ) հատվածների հիմնանորոգում
14	Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասեր 2572 գծ.մ (դեպի Հրազդանի Ջեկ 1264 գծ.մ, 3-րդ փողոց 670 գծ.մ, Պուրակյան փողոց 638 գծ.մ) հատվածների հիմնանորոգում
15	Հրազդան քաղաքի հարավային թաղամաս 1069 գծ.մ (Նոյեմբերյան փողոց 627 գծ.մ, Մյասնիկյան փողոց 442 գծ.մ) հատվածների հիմնանորոգում

Աշխատանքի տեսակը	Պարզ փորձաքննություն

Ընդհանուր դրույթներ	Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն ՀՀՇՆ IV-11.05.02-99 Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների շինարարական նորմերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (այսուհետև՝ տեխնիկական առաջադրանքի), ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան:
Հիմնական պարտականություններ	Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ քաղաքաշինական փաստաթղթեր) փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացում: Քաղաքաշինական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա փորձագիտական եզրակացություն կազմում և տրամադրում:
Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման օրենսդրական և նորմատիվային պահանջներ	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, • ՀՀ գնումների մասին օրենքի, • ՀՀՇՆ IV-11.05.02-99 շինարարական նորմերի, • ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 711-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի, • ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի, • ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշմամբ հաստատված ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման, ՀՀ-ում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման, քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգերի, • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշմամամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի:

Աշխատանքի կատարման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության իրականացման աշխատանքների ավարտը՝ մինչև 30 (երեսուն) աշխատանքային օրից, հաշված Պատվիրատուի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերը Կատարողին փորձաքննության իրականացման նպատակով տրամադրելու օրվանից

**** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:***

***** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 90001105718
գլխավոր բաղտուղար
Հ. Բատիկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան Գայի փ.
շենք 14, բն. 45
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 11500580197801
ՀՎՀՀ 09802201
տնօրեն
Հ. Անդրեասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«09» «12» 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2020/1Փ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
անվանումը կամ ծածկագիրը՝ ըստ գնումների պլանի	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/502	փորձաքննության ծառայություններ	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...
2	50531140/503	փորձաքննության ծառայություններ	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...
3	50531140/504	փորձաքննության ծառայություններ	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...	%...

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 90001105718
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան Գայի փ.
շենք 14, բն. 45
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 11500580197801
ՀՎՀՀ 09802201
տնօրեն
Հ. Անդրեասյան

(ստորագրություն)
Կ.Տ.